

ԳՆԱՀԱՏԵԼԻ ՄԵԾԱՐԱՆՔ

Մեծապէս գնահատելի է, որ Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդը որոշած է արժանաւայել կերպով՝ պաշտօնական հաւելերոյթով ու պաշտան յայտագրով պատուել Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գեորգ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը, իր հաճանայական ձեռնադրութեան յիսնամեակի բարեբաւսիկ առիթով:

Արդարեւ, Հայց. Եկեղեցւոյ բարձրասիւնան հոգեւորականներուն մէջ իր բացառիկ եւ իւրայատուկ տեղը կը գրաւէ Գեորգ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, որ ամենայն լրջութեամբ, պարկեշտութեամբ ու նուիրումով ահաւասիկ կէս դարէ ի վեր կը ծառայէ Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին:

Իր պատանեկան տարիքէն իսկ Սրբազանը ներշնչուած է Երուսաղէմի Տնօրինական Սրբաւայրերէն, Ս. Յակոբեանց Մայրավանքի հոգեւոր մթնոլորտէն, ինչպէս նաեւ երանաւնորհ Պատրիարքներու եւ ականաւոր ու որակաւոր դաստիարակներու հայաշունչ ոգիէն: Ան իր հոգեւոր ծառայութեան սկսած է Երուսաղէմի մէջ, որու կողքին ստանձնած է նաեւ կրթական, դաստիարակչական եւ երաժշտական պարտականութիւններ:

Երիտասարդ տարիքին Միացեալ Նահանգներ հրաւիրուելով, Թորգոմ Սրբազան նուիրուեցաւ հովուական ծառայութեան եւ շուտով իր ձեռք բերած փորձառութեան եւ ստացած բարձրագոյն ուսման շնորհիւ արժանացաւ ժողովուրդի ջերմ սիրոյն եւ գնահատութեան:

Որպէս Առաջնորդը Արեւելեան Թեմին, իր այցելութիւններով, հոգեւոր խօսքերով եւ երիտասարդներու հանդէպ ունեցած մասնաւոր համակրանքով, ան կատարեց կազմակերպչական աշխատանքներ եւ Թեմը սկսաւ յաջողութիւններ արձանագրել իր պատմութեան մէջ: Իսկ 1966 թուականէն ի վեր ամենայն ձեռնհասութեամբ եւ կարողութեամբ, ցարկ կը վարէ այդ հսկայ Թեմի Առաջնորդութեան կարեւոր պաշտօնը՝ միշտ ի մտի ունենալով Մայր Եկեղեցւոյ հոգեւոր առաքելութիւնն ու Հայ ժողովուրդի հոգեւոր կարիքները: Իր Առաջնորդական շրջանին Թեմէն ներս կազ-

մրեցան նոր Ծուխեր, ձեռնադրուեցան նոր եկեղեցականներ, սպուեցան կոսնական եւ այլ գիրքեր եւ Թեմը արձանագրեց շարք մը յաջողութիւններ եւ իրագործուեցան կարգ մը կարեւոր ծրագիրներ:

Յոբելեար Սրբազանը միջ-եկեղեցական ժողովներուն եւ գործունէութեանց մէջ միշտ ալ արժանաւիայել կերպով կը ներկայացնէ Հայց. եկեղեցին եւ իր առաքելութիւնը Քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ կազմէն ներս: Իսկ պետական բարձր քաջանակներու մէջ նոյնպէս Սրբազանը կը վայելէ բացառիկ սէր եւ յարգանք՝ իր սեղծած սերս յարաբերութեանց շնորհիւ:

Թորգոմ Սրբազան, որպէս հաւատարիմ հոգեւոր սպասաւորը Հայց. եկեղեցւոյ եւ հարազատ զաւակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իր սերս կապը կը պահէ Մայր Աթոռի եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հետ եւ միշտ պատրաստ է ամէն միջոցներով օժանդակելու Մայր Աթոռին: Իսկ որպէս անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի, ան իր խորհուրդներով եւ գործօն բաժինով անկասկած կը մնայ ղեկավար գիրքի մը վրայ: Իսկ երուսաղէմ կատարած յանախակի այցելութիւններով ալ հոգեկան իր կապը կը պահէ Սրբաեղեաց եւ Սրբոց Յակոբեանց դարաւոր Պատրիարքութեան հետ:

Անձամբ եւ յանուն Արեւմտեան Թեմի Հոգեւորականաց Դասուն, Թեմական Խորհուրդին եւ հաւատացեալներուն, ի սրէ կը շնորհաւորենք մեր հոգեւոր եղբոր՝ Գեորգ. Տ. Թորգոմ Արքեպիսկ. Մանուկեանի Քաղաքայական Զեռնագրութեան Յիսնամեակը՝ եղբայրական ջերմ սիրով եւ լաւագոյն մաղթանքներով հանդերձ:

Մեր մաղթանքն ու աղօթքն է, որ Աստուած քաջառողջութիւն եւ երկար կեանք պարգեւէ իր հոգեւոր սպասաւորին, որպէսզի տակաւին երկար տարիներ շարունակէ իր հոգեւոր առաջնորդութիւնը Հայց. եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին:

«Ուրեմն, իմ սիրելի եղբայրներս, հաստատուն եղէ՛ք, անշարժ կեցէ՛ք, ամէն ժամ աւելին եղէ՛ք Տիրոջ գործին մէջ. գիտցէ՛ք որ ձեր վասակը ի գուր չէ Տիրոջ առջեւ» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

ՎԱԶԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ